

Էջ 432. տող 20.

“Զոր թափեալ մեծին Ներսիսի, հրա-  
մայեց կրկն որթովք ի գոմ մի, և դար-  
մանս և սնուցողս նոցին կարգեալ, որք  
յետոյ աւանացեալ, անուանեցան Որթք  
այնորիկ ազգաւ”, Ուղղ. կերտկրել սը-  
թովք, ըստ մեզ ոչ է հասկանալի կրել  
սայլերով գոմը այլ կերակրել հորթերու  
հետ կովի կաթով եայլայ տեղ, որ գոմ և  
գոմեր կը կոչուին մինչեւ ցայժմ, մանա-  
ւանդ արեգին տեղերը ձմրան ժամանակի  
համար:

Էջ 439. տող 11.

“Իսկ վաղէս ոչ զթուղթն ընթերցեալ,  
և շէ ետես զմեծն Ներսէս, այլ բացէ ի  
բաց արտասահմանել հրամայէ զնա, և  
զամենայն վտարակրիսն սրոյ մատնել”,  
Ուղղ. Պատահողուն: Հմտ. էջ 440, տող  
16: “Բայց Պապայ յանձն առեալ հան-  
դերձ ամենայն Պատուկոյսն թափեաց Մա-  
կեդոն”,

Էջ 444. տող 13.

“Եւ Արշակայ ոչ ի հակառակս մտեալ՝  
զօղէր. զի մի՛ խռովութիւն ամենայն նա-  
խարարացն յուզիցի”, Ուղղ. յսե՞ր? Ար-  
շակ տեսնալով հակառակ իւր կամաց,  
բռնութեամբ բարշտելով խաղին և սրա-  
խոյրտող անելով թագաւորի սպասաւորնե-  
րը, հարկաւ պիտի յսեր քան թէ թագչէր:

Էջ 452. տող 5.

“Զպիսկոպոս և զքահանայս հարկաց  
պատճառաց կապեալ՝ յերկիրն պարսից  
տալոյ տանել”, Ուղղ. “պատճառաւ”,

Էջ 462. տող 17.


“Ուր սաստկապէս նահատակեալ քա-  
ջութեամբ ընդդիմամարտ լինէր Գնէլ նա-  
հապետ Անձեւացեաց և սպարապետ Պա-  
պայ արեւելեան զօրուն. զօր յաղթողին  
Տերենտիանոսի իւրովի արարեալ սուսե-  
րաւ”, Ուղղ. Գոր:

Էջ 475. տող 11.

“Եւ առաջի զբաց ալրին՝ սեպ էր ուղ-  
ղորդ միապաղաղ, և ի վերուստ պղղան-  
ձաւ քուաւոր, և Հայր յանդունդս խորածո-  
ւոյն, և ինչ զերծանի, յանձնարին ուղիս  
սաստկութեան անկանի”, Ուղղ. “հայեր”,

վերեւէն կախած քիւն, ուրիշ կերպ չէ  
կարելի ասել, բայց եթէ հայեր խորածոր  
անդունդի վերայ:

Հ. Գ. ՆԱԿԱՊԵՏԻԱՆ



— Յ Ա Յ Գ Ե Բ Դ —

1. Լուսինն հետ երգերն հիմա կը ծընին  
Խաւարէն զուր՝ ծովուն վերայ և դաշտին,  
Ու հունչերով կոյսին, հովուին, Թըռուին  
Վարձագանդէ մեծ լըռութեանը հեշտին:

Եւ ալ կ'երգեմ կամ կը խորհիմ այդ պահուն,  
Զի լար մ'ունիմ իմ երգերուս բաւական,  
Սիրաբը կոյս մասն՝ հոգիս երգն է իր անհուն  
Եւ էութիւնս արժագանդենք հընկալան:

Ար խորհիմ. զի խորհուրդն ալ երգն է վըռին  
Ուր կը մտնի Թըռթիւններու տակ ժըթին,  
Նըման շողքին սև բիւրին մէջ վիշերին:

Եւ մեղմ երգեր չիթ չիթ հետուն կը Թըռին  
Խորանքերու օրօրամովը լըռին,  
Ահ, զիշերներ խոր ցայգերգ մ'են Արարչին:

ԱՆԱՐՈՆ



— Ա Բ Դ Ե Վ Յ Զ Է —

Մըթընդարին երբ ամէն բան կը ցընդի,  
Երգ, սէր, ժշկութ, յոյզ կամ արցունք հնձեմող,  
Եւ երբ անոնք բոլոր մը կ'ըլլան և կամ ցօղ,  
Արուսեակն հոն կ'հըսկէ ցաւով մը մութի:

Իր այդ շինջ, շինջ հուր քըթթումները կոյսի  
Կը կաթկըթին կապոյտներէն ևթերին,  
Եւ Թըռիւլ գալ կ'ուզեն ծաղկին, Թիթերին,  
Գո՛ւն կոհակին որ վարն ուսկին կը սարսի:

Արեւ ըլլալ կ'ուզեն անոնք ցերեկին,  
Գըզուկ, շոյիկ կոյսն ու պարման անձկագին,  
Եւ կամ լուսինն ըլլալ խաւար զիշերին,

Ողբավրին դե՛ռ կեանք և յոյս չըբիւլու,  
Ու բրիկտան մեծնող լացերը ապա  
Հստփեկու՝ որ երկրի խոր կը մարին:

ԱՆԱՐՈՆ